ՏՐԴԱՏԻ ԴԱՐՁԸ ՅՈՅՆ ՊԱՏՄԻՉՆԵՐԻ ՔՆՆՈՒԹԵԱՆ ԼՈՅՍԻ ՆԵՐՔՈՅ

Մաքսիմ Եւադեան (Ֆրանսիա)

Ճշմարտութեան հատու դիմելու համար հարկ է կիսամիտ մէկ անգամ ցիրաքայքայուել ստացուած բոլոր կարծիքներից եւ կրկին ու ի սկզբանէ վերակառուցել գիտելիքների ամբողջ համակարգը:

Ռենէ Դեկարտ

Ա. Ներածութիւն

1. Պատմագիտական աշխատութիւնները պարփակւում են երկու կարգի հանգամանքների՝ սկզբնաղբիւրների եւ պատմագիտական հայեցակարգերի շրջանակում, ընդ որում, վերջինները յաճախ ամենասահմանափակող բնոյթն ունեն: Հին Հայաստանի պատմութիւնը, մասնաւորապէս՝ այս փաստի ապշեցուցիչ ապացոյցն է:

Այս յօդուածում ես կը ջանամ Հայաստանի քրիստոնէութեան դարձի օրինակի հիման վրայ ուսումնասիրել այս գաղափարը: Նախ եւ առաջ՝ հարկ է ծանրանալ հին, գլխաւորապէս՝ յոյն հեղինակների վկայութիւնների վրայ: Այնուհետեւ հարկ կը լինի խիստ ճշգրտօրէն ուսումնասիրել Ագաթանգեղոսի բնագիրը եւ դրանում ամփոփուած ժամանակագրական բնոյթի նշումները: Իբրեւ բնագրային ամբողջութիւն՝ վերջիններս ունեն աստուածաբանական եւ նուիրական նշանակութիւն, ինչն, այսպիսով, հարկ է ուսումնասիրել այդ տեսանկիւնից: Գրիգորի վարքերի *շրջանակում ընդգրկուած բնագրերի ամբողջութիւնը հարկ է դիտել՝ իբրեւ այդպիսին՝ նկատի ունենալով այն կրօնական եւ քաղաքական լարուածութիւնները, որոնց մասին դրանք վկայում են:*

Բ. Ժողովուրդների դարձը

2. Հայոց եկեղեցու պատմաբանները, իսկ աւելի մասնաւորապէս՝ նրանք, ովքեր ուսումնասիրել են այս երկրի դարձը քրիստոնէութեանը, երբեւէ բաւարար չափով չեն հետաքրքրուել Եկեղեցու առաջին պատմիչներով: Վերջիններիս հաղորդած տեղեկութիւնները յայտնի են 1562 թուականից ի վեր եւ "De Ecclesiastica Historia"*-ի միջոցով: Սակայն, որքան ինձ յայտնի է, որեւէ մէկը երբեւէ չի մտահոգուել այն լուութեամբ, որը Տրդատի դարձի հարցում առնչւում է Եւսեբիոս Կեսարացուն՝ մասամբ, եւ Սոկրատէսին ու Թէոդորետոս Տիւրացուն՝ ամբողջութեամբ՝ այն դէպքում, երբ ժողովուրդների՝ քրիստոնէութեանը դարձին վերաբերող պատմութիւնը լիովին մաս է կազմում նրանց հետաքրքրած թեմայի:*

Այսպիսով, հարկ է խորամուխ լինել, իբրեւ գրական ժանր, Եւսեբիոս Կեսարացու ուսումնասիրած եւ սկզբնաւորած այս կարեւոր՝ Եկեղեցական պատմութեանն *առնչուող թեմայի մէջ: Մեր յաջորդող քննութիւնը նպատակ ունի այսպիսով ըմբռնել այն, թէ ինչպէս է դարձի եկած ժողովուրդների այս ցուցակը մշակուել, եւ թէ ինչու է Հայաստանը դրանից դուրս մնացել:*

3. Եւսեբիոս Կեսարացի:- Եւսեբիոսը եկեղեցական պատմութեան նախակարապետն է, դրա հայրը: Իր դարաշրջանի մասին նա թողել է պատմաբանի համար կարեւոր եւ հետաքրքիր բազմաթիւ բնագրեր: Ես կանգ կ'առնեմ սոսկ երկուսի, այն է՝ Կոստանդինի վարքի եւ Եկեղեցական

պատմութեան *վրայ, որոնք ուղղակիօրէն առնչւում են մեր թեմային:*

Ճիշտ հասու լինելու համար Եկեղեցական պատմութեանը *հարկ է ըմբռնել, որ Եւսեբիոսը հիմնադրել է նոր պատմութիւն՝ եկեղեցական պատմութիւնը: Աւելի մասնաւորապէս նա շեշտը դրել է նրանց վրայ, ովքեր ի վիճակի էին խօսել հրապարակայնօրէն, այսինքն՝ եպիսկոպոսների վրայ: Այս պատմութիւնը կարող էր լինել նախ եւ առաջ՝ մեծ եկեղեցականների, նրանց կեանքի, աշխատութիւնների եւ յատկապէս՝ առաքելական սերնդի պատմութիւնը: Պատմութիւնը, որը նա մեզ պատմում է, ոչ այլ ինչ է, եթէ ոչ մի մարդու՝ այլ մարդկանց վրայ, մի եպիսկոպոսի՝ այլ եպիսկոպոսների վրայ նետած հայեացք. այս փաստը Եւսեբիոսի աշխատութեան ընթերցման բանալիներից է: Այս կտրուածքով, անդադրում հետեւելով աւելի շուտ մարդկանց, քան գործողութիւններին՝ նա նշել է (V, 10 գլխում) փիլիսոփայ Պանտենի եւ Ասիայում (մինչեւ Հնդկաստան) քրիստոնէութեան տարածման վրայ նրա ունեցած ազդեցութեան մասին: Քանզի նրա Պատմութիւնն աւարտին է հասնում այն պահին, երբ Կոստանդինը դառնում է միանձնեայ կայսր (323 թ.), միանգամայն օրինաչափ է, որ վրացիների, պարսիկների կամ գոթերի դարձի մասին յիշատակում չենք գտնում:*

Կոստանդինի վարքում *հեղինակի մօտեցումը դառնում է յստակօրէն ջատագովական, անգամ վարքագրական: Եւսեբիոսը փառաբանում է Կոստանդինին եւ յանուն եկեղեցու զարգացման ծաւալած նրա գործունէութիւնը: Նրա կողմից բերուող՝ Կոստանդինի հաւատքին ու ջանադրութեանն առնչուող ամենաակնյայտ ապացոյցների թւում է նաեւ կայսրի աջակցութիւնը ոչ հռոմէական ժողովուրդներին, նրանց շրջանում աւետարանական քարոզը տարածելու հարցում: Այսպիսով, կարելի է նշել հետեւեալ հատուածները.*

I, VIII. Կոստանդինն իրեն է ենթարկում ամբողջ Սկիւթիան: Նրա կողմից նուաճուած բոլոր երկրամասերում, ըստ թագաւորական հրովարտակի՝ բլեմմիդները, եթովպացիները եւ հարաւի ժողովուրդները հռչակում են Աստծոյ անունը:

II, LII. Բարբարոսները դարձի են գալիս քրիստոնէութեան:

IV, VII. Բարբարոսական զանազան ժողովուրդների՝ բլեմմիդների ցեղերի, հնդիկների եւ եթովպացիների բանագնացները կայսրից նուէրներ են ստանում:

IV, VIII. Կոստանդինը գրում է Պարսից թագաւորին քրիստոնեաների ճակատագրի մասին (հետեւում է նամակի պատճէնը):

IV, L. Հնդիկների՝ Կոստանդինի մօտ ուղարկուած բանագնացը եւ նրա նուէրները:

Արդէն տեսանելի է դառնում, թէ Կոստանդինի գահակալութեան օրօք ինչպէս են ուրուագծւում աւետարանական քարոզի տարածման գլխաւոր ուղղութիւնները.

ա) Իրան,

բ) Ափրիկէ,

գ) գերմանական ցեղեր՝ բլեմմիդների հետ մէկտեղ, եւ յատկապէս գոթեր,

դ) Հնդկաստան:

Կարելի է արդէն նշել Հայաստանի բացակայութիւնն այս ցուցակում, որը գրուել է, այդուհանդերձ, Կոստանդինի գահակալութեան եւ գործունէութեան ժամանակակցի եւ, բացի այդ, կայսեր մերձաւորի կողմից: Այս իսկ պահից թոյլատրելի է խորհել, որ եթէ Եւսեբիոսն ի վիճակի լինէր Հայաստանը յաւելել այն երկրների թուին, որոնցում քրիստոնէութեան տարածմանը նպաստել է Կոստանդինը, անվարանօրէն արած կը լինէր դա:

© National Library of Armenia

4. Սոկրատէս:– Այս կրօնաւորը հետապնդում է 306 թուականից մինչեւ 439 թուականը Եկեղեցու պատմութիւնը *գրելու նպատակ: Նրա աշխատութիւնը կարեւոր է եւ լաւ փաստագրուած: Իր առաջին գրքում նա կազմում է դարձի եկած ժողովուրդների ցուցակը.*

I, 18. Քրիստոնէութեան թափանցումը գոթերի, սարմատների եւ պարսիկների շրջանում Կոստանդինի գահակալութեան օրօք:

I, 19. Ինչպէս է Կոստանդինի գահակալութեան օրօք քրիստոնէութիւնը թափանցել Հնդկաստանի ներքին նահանգներում բնակուող ազգութիւնների շրջանում:

I, 20. Ինչպիսի ձեւով են իբերները (Վիրքը) քրիստոնէական դարձի եկել:

I, 21. Պարսկաստանը եւ մանիքէականութեան հիմնադիր Մանին:

IV, 33. Գոթերը քրիստոնէական դարձի են եկել Վաղէսի գահակալութեան օրօք:

Այստեղ եւս նկատելի է Հայաստանի բացակայութիւնը:

5. Թէոդորետոս Տիւրացի:– 322 թուականից մինչեւ 427 թուականն ընդգրկող իր Եկեղեցական պատմութեան *մէջ նա եւս շօշափում է ժողովուրդների դարձի հարցը: Նա ուսումնասիրում է Սոկրատէսի կազմած ցուցակը.*

I, XXIII. Հնդիկների դարձը 328 թուականի շրջանում:

I, XXIV. Իբերների դարձը 328 թուականի շրջանում:

I, XXV. Քրիստոնեաների առիթով Կոստանդինի՝ Պարսից Շապուհ արքային 330 թուականին գրած նամակը:

Նա գոթերին քննարկում է միայն IV, 37 գլխում, Վաղէսի՝ 378 թուականի արշաւանքից յետոյ (IV, 36), քանզի աւանդաբար դրա ընթացքում է տեղի ունեցել այդ ցեղերի վճռական շրջադարձը դէպի քրիստոնէութիւնը: Այստեղ եւս, Կոստանդինի հանդէպ բարեհաճ այս հեղինակը ոչ մի խօսք չի ասում նրա գահակալութեան օրօք Հայաստանի հնարաւոր դարձի մասին:

6. Սոզոմենոս:– 445 թուականի շրջանում գրած իր Եկեղեցական պատմութեան *մէջ Սոզոմենոսը հանդէս է գալիս իբրեւ մի հեղինակ, որն ամենաընդարձակ ձեւով ծաւալելու է Կոստանդինի ժամանակներում դարձի եկած ժողովուրդների ցուցակը: Նա նշում է մասնաւորապէս աւանդական դարձած երեք ժողովրդի մասին.*

II, 6. Կելտերի, գաղիացիների, գոթերի դարձ:

II, 7. Թէ ինչպէս են յանուն Քրիստոսի իբերները հաւատք ձեռք բերում:

II, 8. Թէ ինչպէս են յանուն Քրիստոսի հայերը հաւատք ձեռք բերում:

II, 9-15. Թէ ինչպէս են յանուն Քրիստոսի պարսիկները հաւատք ձեռք բերում, որին յաջորդում են Պարսից գործերը:

II, 16-23. «Նիկիայի եկեղեցական ժողով»:

II, 24. Թէ ինչպէս են Հնդկաստանի որոշ ազգութիւններ դարձի եկել քրիստոնէութեան:

Սակայն, ինչպէս խիստ դիպուկ ձեւով նշել է Գի Սաբբահը, Սոզոմենոսը «ստոյգ ժամանակագրութեան նկատմամբ ունի բացայայտօրէն դրսեւորուող արհամարհանք»՝ այն դէպքում, երբ Եւսեբիոսը դրան շատ մեծ նշանակութիւն է յատկացրել: Այս հեղինակը չի նշում նոյնիսկ Նիկիայի եկեղեցական ժողովի տարեթիւը: Թեմատիկ առումով լայն ասպարէզներ ընդգրկող՝ պատմութեան նրա հայեցակարգը բացառում է յստակ ժամանակագրութեանն առնչուող իւրաքանչիւր կաշկանդուածութիւն:

Բացի դրանից, ինչպէս եւ իր անմիջական նախորդները (Սոկրատէսը եւ Թէոդորետոսը), նա ցանկանում է լինել կայսերական եկեղեցու, իսկ եթէ հարցին մօտենանք աւելի արդարացիօրէն եւ յստակօրէն, հաւանաբար, քրիստոնէական կայսրութեան պատմիչ: Այդ ժամանակից ի վեր քրիստոնէական տիեզերականութեան *միւս բոլոր տարածքները սոսկ* լուսանցք *են: Նա այդ մասին ակնարկում է, երբ յանուն պատմութեան լաւագոյն ըմբռնման նպատակայարմար է գտնում, բայց ո՛չ աւելին:*

Ընդգրկելով քրիստոնէութեան ծաւալումը՝ նա ուշադրութիւնը կենտրոնացնում է գլխաւորապէս չորս հարցի վրայ: Առաջին երեք հարցերն են՝ պաշտամունքային եկեղեցական ծէսերի զարգացումը, յատկապէս՝ աստուածաբանական տեսանկիւնից, վանականութեան ի յայտ գալը եւ նոյնիսկ հեթանոսների դէմ ուղղուած հալածանքների աչառը: Ես դրանց շուրջ ծաւալուելու ցանկութիւն չունեմ: Վերջին հարցը վերաբերում է քրիստոնէութեան տարածմանը կայսրութիւնից դուրս: Անձամբ Սոզոմենոսը յամառում է այն շահագրգռուածութեան շուրջ, որը յանգում է հետեւեալին. «Հաղորդել պարսիկների եւ բարբարոսների շրջանում մեր կրօնին առնչուող փաստեր՝ որքանով, այդուհանդերձ, ես ի վիճակի կը լինեմ այդ անել»:

Ըստ այդմ՝ գոթերի եւ հայերի դարձը՝ նա միաւորում է Կոստանդինի օրօք տեղի ունեցած երեք ժողովուրդների դարձի հետ: Սակայն, գիտակցելով ժամանակագրութիւնը քրիստոնէութեան տարածման նուաճումների ջատագովութեանը զոհաբերելու անհրաժեշտութիւնը, նա յիշատակում է ձեռք բերուած յիրաւի ազատութիւնների մասին, ընդգծում (II, 6 գլխում), որ գոթերի դարձը հարկ է տեղադրել «Գալլիենոսի եւ նրա յաջորդների գահակալութեան օրօք» եւ, հնարաւորութեան սահմաններում, պարզորոշ ձեւով ճշգրտում է (II, 8 գլխում). «Ես տեղեկացել եմ, որ հայերը նախկինում քրիստոնէութիւն են դաւանել»: Նրա բնագրում, այսպիսով, որեւէ երկիմաստութիւն չկայ. Տրդատը դարձի է եկել նախքան Կոստանդինի գահակալութիւնը: Եթէ Սոզոմենոսը գրել է այս գլուխը, ապա դա արել է, նախ եւ առաջ, ձեւական պատճառներով, ինչը հեղինակի կողմից հաճոյանալու դրսեւորում է:

7. Մասնակի եզրակացութիւն:– Եկեղեցու առաջին պատմիչների աւելի ստոյգ ուսումնասիրութիւնը թոյլ է տալիս հաւաստել, որ ոչ հռոմէական ժողովուրդների դարձի շուրջ Կոստանդինի օրօք աստիճանաբար հաստատուել է պատմագրական աւանդոյթ, որը եթէ Կոստանդինի *վարքում դեռեւս թոթովւում է, ապա գրական տեսանկիւնից լիարժէք զարգացում է ապրում շնորհիւ Սոզոմենոսի: Այդ ցուցակից Հայաստանը պարբերաբար բացակայում է, իսկ դա վկայում է, որ Տրդատը նրա գահակալութեան գոնէ քրիստոնեայ եղած ժամանակում չէ դարձի եկել: Սոզոմենոսի մօտ վերջինիս դարձին առնչուող միակ յիշատակումը համահունչ է հեղինակի գիտակցաբար թոյլ տուած ժամանակավրիպութեանը, որով սկիզբ է առնում Կոստանդինի գահակալութեանը նախորդած եւ յաջորդած ժամանակաշրջաններում դարձի եկած ժողովուրդների այս ցուցակը:*

Գ. Ակնյայտութիւն հին հեղինակների համար

8. Մենք տեսանք, որ եկեղեցու պատմիչները գրեթէ համակարծիք են Տրդատի դարձը Կոնստանդինի օրօք (305-337 թթ.) չտեղադրելու հարցում: Բացի դրանից, նոյնիսկ յայտանիշներ ենք գտնում Տրդատի դարձը ոչ միայն նախքան Կոստանդինի գահակալութիւնը, այլեւ մինչեւ նահատակների դարաշրջանը *(303-311 թթ.) տեղադրելու համար:*

9. Աթանաս Աղեքսանդրացի:– 318 թուականի շրջանում գրուած Ցաղագս մարմնաւորութեան Աստծոյ Բանին *տրակտա-*

© National Library of Armenia

տում Աթանասը ներկայացնում է քրիստոնէութեան տարածումը: Քրիստոնէական ազգութիւնների թւում նա յիշատակում է Հայաստանը: Բնագիրը հետեւեալն է.

«LI, 2. Ո՞ր մարդն է կարողացել կտրել-անցնել այսպիսի տարածութիւններ, գնալ սկիւթների, եթովպացիների, պարսիկների, հայերի, գոթերի մօտ, նրանց մօտ, որոնց մասին ասում են, որ բնակւում են Ովկիանոսի այն կողմում կամ Վրկանաց աշխարհից այն կողմ, կամ նոյնիսկ եգիպտացիների ու քաղդէացիների մօտ՝ ժողովուրդների, որոնք տուրք են տուել մոգութեանը, չափազանց սնահաւատ են եւ վայրենի բարքերի տէր, քարոզելու համար առաքինութիւն, ողջախոհութիւն եւ կուռքերի պաշտամունքից հրաժարում, ինչպէս այդ արել է բոլորի Տէրը՝ Աստծոյ հզօրութիւնը, մեր Տէր Յիսուս Քրիստոսը: 3. Նա ոչ միայն նրանց քարոզել է իր աշակերտների միջոցով, այլեւ նրանց համոզել է իրենց հոգում լքել իրենց բարքերում տիրող բարբարոսութիւնը, այլեւս չմեծարել իրենց հայրերի աստուածներին: 4. Յիրաւի, նախկինում, երբ նրանք դաւանում էին կռապաշտութիւն, յոյներն ու բարբարոսները պատերազմում էին, եւ իրենց ազգութեան անդամները նրանց դիտում էին իբրեւ դաժանների: Նրանց միջեւ ընթացող այդ սարսափելի պայքարի պատճառով գործնականօրէն անհնար էր կտրել-անցնել ցամաքն ու ծովն, առանց ձեռքում զէնք ունենալու, առանց սրի օգնութեան»:

Այս բնագիրը մեկնաբանուել է իբրեւ Տրայանոսի (98-117 թթ.) ժամանակներին առնչուող, սակայն ոչինչ թոյլ չի տալիս տուրք տալու նման ենթադրութեան: Յաբակից գլուխներում արուած ոչ մի ակնարկ չի թոյլատրում ենթադրել, որ հեղինակի հաղորդած փաստերը նախորդել են նրա ժամանակաշրջանին: Այսպիսով, մեծ է հաւանականութիւնն առ այն, որ Աթանասը խօսում է քրիստոնէութեան տարածման, անգամ Հայաստանի դարձի մասին:

10. Եւսեբիոս Կեսարացի:- Իր Եկեղեցու պատմութեան մէջ Եւսեբիոսը նշում է 311 թուականի վերջին տեղի ունեցած այն ներխուժման մասին, որին ենթարկուել է Տրդատի թագաւորութիւնը, որը Պոմպէոսի ժամանակից ի վեր ունէր հռոմէական ժողովրդի բարեկամի եւ դաշնակցի համբաւ.

«IX, VIII, 2. Տիրակալի [Մաքսիմիանոս Դայայի] համար այս բաներին յաւելւում է հայերի դէմ սանձազերծուող պատերազմը՝ այն մարդկանց, որոնք հնագոյն ժամանակաշրջանում հռոմէացիների բարեկամներն ու դաշնակիցներն էին, որոնք եւս լինելով քրիստոնեաներ՝ ջանադրութեամբ ի կատար էին ածում իրենց բարեպաշտութիւնն Աստուածութեան հանդէպ, եւ արդիւնքում՝ Աստծոյ թշնամին փորձեց հարկադրել զոհաբերութիւններ անել կուռքերին ու դեւերին, նրանց վեր ածեց բարեկամներից, ինչպիսիք որ կային, թշնամիների, եւ դաշնակիցներից՝ հակառակորդների:

4. Նա ինքն, այսպիսով, իր բանակների հետ մէկտեղ հիւծւում էր հայերի դէմ պատերազմում՝ [այն ժամանակ, երբ] նրա իշխանութեանը ենթակայ քաղաքների բնակիչները կործանւում էին ոչ միայն սովից, այլեւ ժանտախտից, այնպէս որ ցորենի իւրաքանչիւր չափը փոխանակւում էր 2500 ատտիկական [դրախմայով]»:

11. Սոզոմենոս:- Վերջապէս, Կոստանդնուպոլսի այս նախկին դատապաշտպանն իր Պատմութեան մէջ Տրդատի դարձի վերաբերեալ անում է աւելի ծաւալուն նշում.

«II, 8. 1. [Այնուհետեւ հարեւան ժողովուրդների շրջանում հաւատքի դաւանութիւնն առաջընթաց ապրեց եւ լայն տարածում գտաւ:] Ի դէպ, ես տեղեկացել եմ, որ հայերը նախկինում քրիստոնէութիւն են դաւանել: Պատմում են, որ Տրդատը ժողովրդի թագաւորն էր եւ իր ընտանիքին վերաբերող աստուածային հրաշքից յետոյ դարձել է քրիստոնեայ ու կարգադրել, որ բոլոր իշխաններն, ըստ մի կոչի, դաւանեն միեւնոյն պաշտամունքն, [ինչ որ ինքը]»:

Բացի ժամանակագրական բնոյթի մատնանշումից, որը մեր թեմայի առնչութեամբ գլխաւորն է, այս բնագիրը թոյլատրում է նկատել, որ Ագաթանգեղոսի հիմնական տուեալներն արդէն իրենց տեղում են:

Վերջաբան

12. Այս հակիրճ ուսումնասիրութեան լոյսի ներքոյ բաւականին պարզորոշ ակնյայտ է դառնում, որ ըստ IV եւ V դարերի հեղինակների վկայութեան՝ Հայաստանը եւ դրա թագաւորն անառարկելիօրէն քրիստոնեաներ են այնպիսի մի տարեթուից ի վեր, որը նախորդում է թէ՛ Կոստանդինին եւ թէ՛ նոյնիսկ, մեծապէս, Դիոկղետիանոսի հալածանքի սկզբնաւորմանը: Թւում է, թէ ըստ նրանց՝ ստիպուած ենք այս իրաղարձութիւնը տեղադրել եկեղեցու փոքր խաղաղութեան ժամանակաշրջանում (260-303 թթ.):

Կոստանդինի դարձին (313 թ.)՝ Տրդատի դարձը նախորդած լինելու փաստն, այսպիսով, յստակօրէն ակնբախ է դառնում, երբ ճշգրտօրէն ուսումնասիրում ենք քրիստոնէական հին դարաշրջանի հեղինակներին: Այս հաւաստումն անելուց յետոյ թւում է անըմբռնելի, թէ ինչու է ժամանակակից քննադատութիւնն այդչափ փոքր նշանակութիւն յատկացնում այս բնագրերին: Անհրաժեշտ է, այսպիսով, ըմբռնել, թէ ինչպէս է ձեւաւորուել պատմագիտական հզօր աւանդոյթը եւ խոչընդոտել նկատելու վերը տրուած փաստերը:

Ֆրանսերէնից թարգմանեց
Վարուժան Պողոսեանը

© National Library of Armenia